

ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՋԱՆԴԱՅՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍՈՒՔԻԱՍ ՊԱՐՈՆՅԱՆԻՆ

Անվանի հայագետ Նորայր Բյուզանդացին (Գաղեզյան-Ճղմեճյան-Թերզոնց Ստեփան, 1845—1915) իր երկարատև գիտական գործունեության ընթացքում նամակագրական լայն կապեր է ունեցել ժամանակի հայ և օտար բազմաթիվ մտավորականների, այդ թվում և հայագետ Սուքիաս Պարոնյանի (1828—1903) հետ։

Ներկայացվող նամակներից մեկն էլ ուղղված է մշակութային գործիչ և լրագրող Հ. Տեր-Աստվածատրյանին։ Նամակներում արծարծված են բանասիրական և պատմական բազմապիսի խնդիրներ՝ կապված հայ մատենագրության հետ։

Նամակները, որոնցից մի քանիսը տպագրվում են որոշ կրճատումներով, պահվում են Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարանի) արխիվում։

ՎԱՐԱՋԴԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

1

14 սեպտ., 1884

Սիրելիդ իմ հ. Սուֆիաս

Հունիսի 26-ին և ամսուս 5-ին նամակացդ միանգամայն պիտի պատասխանեմ։ Նախ պետք է, որ շնորհակալ ըլլամ պատվասիրական... բանիցդ ոգոթյունքդ շեմ մեծամտիր, այլ խրախույս կառնում, վասնզի քաջ դիտեմ թե որչափ դժվարին է սիրելությանդ գովեստից արժանանալ։ Ինչո՞ւ այսպես իրարմե հեռի պիտի ապրինք¹, զուրկ ի միմիանց օգնականությունե, ինչու պիտի շունենանք մեր ձեռաց ներքև նախնյաց գրչագիրները, որպեսզի իբրև կրկին լողորդ ընկղմենք անոնց խորը և վեր բերենք հայ լեզվին թաքուն մարգարիտները։ Հաճախ կերազեմ վանքին ձեռագրաց թանգարանը², կերազեմ անպատմելի խնդությամբ, թե մեծամեծ գյուտեր կընեմ... Թե էջմիածնի և Ծրուսաղեմի թանգարանք հարուստ են ս. Ղազարու թանգարանին չափ, չգիտեմ, բայց ե՞րբ պիտի երթամ ի Պաղեստին և ի Հայս. պիտի դիմանամ, մանավանդ թե կինս պիտի դիմանա՞ անհանգիստ ուղևորության մը տեսակ տեսակ արկածներուն։ Ի՞նչ պիտի ըլլան մահվանես ետքը իմ աշխատությունքս։ Այս ամենայն կտազնապեցնե զիս մեծապես։ Այժմ կաշխատիմ հայերեն բառարանիս, որմե պիտի ելնեն շորս բառարանք. ա. Հայերեն բառգիրք³, բ. Ստորին հայերենի բառգիրք⁴, գ. Գավառական հայերենի բառգիրք⁵, դ. Հայերեն-գաղղիերեն բառգիրք⁶։ Այս շորս բառգիրքերը պատրաստելեն ետքը պիտի ձեռնարկեմ Գաղղիերեն-հայերեն բառարան ի պետս դպրոցաց։ Բառաքննությունս ալ կճոխանա օրեօր նորանոր գյուտերով և տեսություններով. երկրորդ ապագրութեան ոչ ևս պիտի ըլլա տետրակ մը այլ թանձրկեկ հատոր։

Բյուզանդա քննությունս տակավին չավարտեցավ, շատ նոր բաներ ավելցուցի: Lacune* մը ցույց տված եմ այդ պատմության մեջ, որու շատ պիտի հավնիս: Անցյալ օր Michel Bréal⁷ կկարդայի. որչափ ուրախացա տեսնելով որ Բյուզանդա «դոքսովել ի ծարավո» գրածը սանսկրիտ բառով «ցամաքել ի ծարավո» կնշանակե, ինչպես գրած են նախնիք ուրիշ տեղ, դդ. Sêcher de oïf հորենացվոյն Ագոաս անվան վերա ուրիշ անգամ գրեցի սիրելվուդդ: Պատասխանեցիր թե Ագոաս Ափրիկեի աղավաղությունն է: Բայց ի՞նչ կսես իմ կարծյացս. Ափրիկե ծանոթ անուն մը է, և դժվարին է ենթադրել այնչափ անհմուտ գաղափարող, որ Ափրիկե անունը անգիտանա և ելնե խանդարե Ագոաս. Գալլիա անունն դուրավ փոխած է ի Գալլիա, բայց Ափրիկե շատ հեռի է յԱգոասէ: Գիտես, որ Հովնան կերթա ի Հոպպե և անտի, նավ կմտնե, որ փախչի ի Թարսիս:

Արդ ինչ կսե հորենացի. «ի սատակել որպես (Յեսվա) զՔանանացիս՝ անցին ի սմանե փախստականք յԱգոաս նավելով ի Թարսիս»: Քանանու երկիրն է Պաղեստին և Փյունիկե հանդերձ ծովեզերոք, այժմու ասորվոց հին Հոպպե է և Պաղեստին. Հոպպեն վեր կուդա Ակկա (St. Jean-d'Acree) նույնպես քաղաք ծովեզրյա նախկին Քանանու Չի կրնա՞ր հորենացվոյն Ագոասն ըլլալ Ակկա, Քանանացիք երկրին ներսերեն կդիմեն ի ծովեզերացն Ակկա, որպեսզի անտի փախչին ի Թարսիս, ինչպես որ Հովհան կդիմե ի Հոպպե, որպեսզի անտի փախչի նավով ի Թարսիս: Ակկայի հին անունն է Ակկով (Acco). Օգնե ինձ մատենայաց հմտությամբ ցուցանելու համար, թե հորենացվոյն ժամանակը Ակկով կկոչվեր Ակոաս կամ Ագոաս, և ահա կլուծվի կարծեմ խնդիրն: Ուստի՞ է գաղղիներեն Acree:

Չափ բառին վերա տեղեկություն ուզեր էիր հինն, գրեցի մայիսի 5-ի նամակովս, որ ի թարգմանությունս ասորականե, կնշանակե կարգ: Բայց սաղմոսաց ծանոթ հատվածին մեջ ուր չափ դրած են Եվսեբյա և Եփրեմի թարգմանչիք՝ փոխանակ կարգ, թվի թե չափ նշանակե, ըստ ասորվոյն նմանությամբ: Ահավասիկ բան սաղմոսին ասորերեն. աբ ու քամրո լրեօլսմ սլատմութեն տմելիդտեֆ, բառ առ բառ՝ դու ես քահանա հավիտյան ըստ նմանության տմովթօ, պատմութեհ՝ ըստ նմանության (similitudo**). Մեկիքսեդեկի⁸: «Հայրական չափն» ուրեմն կնշանակե՝ «հայրական նմանություն» և Առաքելաչափն՝ է Փարպեցվոյն առաքելանմանն:

Ալեքսանդրի պատմությունն համեմատեցի ընդ Մյուլլերի⁹ հունականին (ըստ ներելո գիտությունս). բավական օգտեցա: Կհիշես 110 երեսը մետեոնաս անիմանալի բառն զոր սիրելությունդ ի Քրոֆորտյան օրինակին գտած է մետոնաս ի ծանոթության կըսվի «հունյն թերի է», վասնզի Մյուլլերի ձեռագիրն անծանոթ էր այնժամ, արդ ի նմին տեղվոյն գտա ես հունարեն ֆրեեօվլավիս բառն (երես 46), որ ըստ Alexandre-ի հույն-դադ. բառարանին (երես 1549, ա.) կը նշանակե qui a l'esprit dérangé***, fou extravagant**** արմատք բառիս են ֆրին՝ միտք, և վլաբդօ՝ վրնասեմ, nuire*****, léser*****.

* վրիպում:

** նմանություն (լտ.):

*** որը ցնորվել է (ֆր.):

**** արտառոց հիմար (ֆր.):

***** վնասել (ֆր.):

***** վնասել, վիրավորել (ֆր.):

blesser*, endemmager**. Արդ մետեռնասն կամ մետեռնասն չե՞ս կարծեր ուղղելի մտաւնաւ: Ունիմք մարդաւնաւ, թեպետ և ոչ հին հեղինակի՝ ունիմք դարձյալ վնասամտութիւն, որու դիմաց Հայկազյանն¹⁰ նշանակած է յն. ֆրենովլավիս:

Կրնաս պարապով օրինակել և զրկել ինձ ունեցած տաղերդ (Ֆրիկ, և այլն): Նույնպես և Բարիդի գրատունը օրինակածդ զհայերեն նշանագրաց, շատ շնորհակալ կըլլամ: ...Շատ շնորհակալ եմ, Եվսեբիոսիդ¹¹ այժմ ունիմ և ես օրինակ մի. ի՞նչ ողորմելի տպագրութիւն. ի՞նչ անմտութիւն և անմտադրութիւն. մանավանդ Ճարեոնի թարգմանութիւնն¹² capo d'opera մի է:

Ինք կգրեմ իբրև ավելի դուրահնչիւն. ինք կա բազում ուրեք առ նախնիս: «Թարգմանութիւն» գոյական կա ի կոչումն ընծայութեամբ: «Թ յև» գրած եմ ինչպես կըսվի անխտիր «ի պատկեր յուր», «ըստ պատկերի յուրո»։ Կլծորդի դրած եմ իբր se conjugue*** գրութեանցս ժամանակ միշտ կցավիմ որ ոչ զոք ունիմ քովս խնդակից: Թղթատարին մեկնելու ժամն է, պետք է որ թուղթս փակեմ: Մնաս ողջամիտ, սիրելիդ իմ Հ. Սուրբիաս: Ընդունիր կնոջս բարեկեցութիւնը և գիտցիր զիս միշտ քույր:

(ց. 70, թղթ. 235բ, վ. 244, Յ 15)

2

28 դեկտեմբեր, 1884

Սիրելիդ իմ Բ. Սուրբիաս

Սեպտեմբերի 14-ին թուղթ մը գրեցի քեզ, բայց կերևի թե փոխանակ Մանչեստր երթալու մոլորեր է ի Մանչեսթր:

Վերջապես գտա Լոնտրայի բազմալեզվյան Աստվածաշունչը և զասորի թարգմանութիւնն մակաբայեցվոց հանդիպակաց լատին թարգմանութեամբն: Հին տպագրութիւն մ'է, սխալոտ, ինչպես թվեցավ ինձ. 200 տարի է ի վեր ասորի լեզվին ուսումը շատ ավելի զարգացած է. ուր էր թե ունենայի Paul Lagarde-ի՝ նոր տպագրութիւնը: Այժմու կարծիքս այս է. հայերենն թարգմանութիւնն է ասորվոյն, բայց սրբագրութիւն ի հունե. արթամ և քանի մի այլ վրիպակք՝ հունականին չհասկացողութեամբ են, հայտնի է, զի ասորին ուղիղ գրած է այդ հատվածները. մաղթեմ ինձ ժամանակ, շատ բան ունիմ ընելիք, բայց 40-ս ուրեցի. ե՞րբ ի գլուխ պիտի հանեմ ձեռնարկած գործերս, չգիտեմ:

Գրեմ ինձ թե բառարանիս մինչև ո՞ր թերթը ունիս, որպեսզի հղեմ մնացածը: Մաղթելով սիրելիդ բարեհաջող նոր տարի, կատարյալ հանգստութիւն և առողջութիւն. մնամ միշտ անձնվերդ:

(ց. 70, թղթ. 235բ, վ. 244, Յ 70)

3

27 փետր., 1885

Սիրելիդ իմ Բ. Սուրբիաս

Անցյալ դեկտեմբերի 31-ին նամակիդ պատասխանն ուղացնելու պատճառն Հնդկաբնակաց Եփեսոսէն եղավ: Երկու ամսի ի վեր կսպասեի այդ

* վերավորվել (ֆր.):

** վնաս հասցնել (ֆր.):

*** խոնարհվում է (ֆր.):

գրքին, և վերջապես ընկալա երեկ և աչքե անցուցի: Ահա իմ կարծիքս. հեղինակն լեզվաքննության հմուտ է, բայց հայ մատենագրության թերահմուտ, կուզեմ ըսել թե նախնյաց գրվածովք սնյալ չէ, ինչպես կվայելէր Մխիթարյանի: Օրինակ իմն: Զմայլիմ (52) կհամեմատե անգ. smile (ժպտիմ) և լտ. mirari (սքանչանամ) բայերուն հետ, բայց գմայլիմ մեր ընտիր մատենագրաց քով կնշանակե se rassasier*, զգվաղյալ (55) կոհկնե թափառական, եթե Ոսկեքերանի Սաայու մեկնության հատվածն ներե զայդ իմաստ, բայց ես ուրիշ 3 օրինակ հիշած եմ այդ բառիդ (Հայկ. բառաքնն. ?), որս Թափառական չի հարմարիր—kak, բռնել (68) հայերեն ևս բնածայն արմատը չկա», կհամեմատե, ես կսիմ թե կա. «ծաղր այնուհետև, ժպտումն, քեֆումն և քնքումն», «Վարժ հաղանց»-ի բերանո կրոնավորին մի՛ երբեք անամոթ խախանք ելցին» եփր. հրատ. (թե քեֆումն և թե խախանք կմեկնվին քան քան, ծիծաղ, ի Հայկդ.):—Ար արմատեն կհանե հերյուրել (62), չես կարծիր որ հերյուրեմ երյուր բառեն ծագի և նշանակե նամբա բերել, զգաստացնել, «Հարգացյա զկինն, ած հերյուր» «Ոսկ. մեկն. եփես. 835 (որ այլուր առ նախնիս ասի ածել ի ճանապարհ), Հայկազյանի մեջ նշանակյալ գրեթե ամեն վկայությունք հերյուրիմ՝ նամբա բերել, ուղղել՝ կնշանակեն.— պատկան դարան կապարեմ մեկնելն ետքը (88) կհամեմատե. «պատկան (նետ), որ մեր մեջ առանձինն չի գործածվեր, պահլավիկ բառ մըն է, որուն նոր պարսկերեն ձևն է պական = պատկան»: Բայց զի՞նչ է փիլն. ո՞չ ապաքեն պական (փեյֆյան). ուրեմն պատկան-դարան է, փեյն-դարան, ինչպես որ պրս. փեյդամ է, հյ. պատգամ, փեյվեսին՝ պատվաստ, այսպես ալ փեյֆյան և պատկան որ և համառոտադուն ձևով ասի փեյն.— բռնվեմ կհամեմատե ըստ bhag բաշխեմ (95). ես կարծեմ թե բռնվեմ (որ կնշանակե Gouter**, Savourer***, Jouir****) կհամեմատի ընդ Baksha, ուտիմ, որմե Bacchus (տե՛ս Bacchus ի Լիտրե)—նստիմ բառի մեջ և նախդիր կհամարի նի—ստ. իսկ Լիտրե ուժ բառին ստուգաբանություն մեջ կհիշե դսանսկրիտ ուժա. „qui est, dit Benfey, pour nissada, convalesson, proprement acte de s'asseoir***** նախնիք ըսած են «նստել ի թուխս», couver.*****—կրնայի հղել և զայս, բայց թուղթս կերկարի: Ստուգաբանություն մ'ալ հինն. հայերեն սափասուա (115) բառը. կհամարի այլալուծյուն սփուտ արմատին կրկնված թվոյն. կարելի է որ այս բառս հունարեն ոմեկնվի «նայտնի (սափա) սուտ», սափի եսլան, ինչպես թուրք կսեն. թուրք <երեն> սափի գիտե՞ս որ հունարեն սափիս բառն է, որ կնշանակե claire, évident, manifeste, certain (սափիս բիողիս, այսինքն հայտնի հավատք), հույն լեզվին մեջ կա՞ արդյոք սափիս փսեվտոս (սափա սուտ), հայտնի սուտ. կրնաս ստուգել զայս: Զայս ամեն դիտողությունքս խնդրեմ քովդ պահես. կուզեի գրել իրեն ընդարձակորեն, բայց չգիտեմ թե ինչ ընդունելություն պիտի գտնե գիրս...

Ըրած ամեն դիտողությունքս ալ արև ու լուսույն պես անուրանալի են: Այսօր կարդացի Արևելի մեջ Այտընյանի հոդվածն. կերևի թե այդ ալ քար

* կշտանալ, հագնալ (ֆր.):

** ճաշակել, համտեսել (ֆր.):

*** ըմբռնել, ճաշակել, վայելել (ֆր.):

**** վայելել (ֆր.):

***** Իր համար Բեռլինը ասում է ձու դնել, զուտ նստելու գործողության մասին է (ֆր.):

***** Թուխս նստել (ֆր.):

մ'է շ. Ստեփ. Յաղըճեանի² գլխուն, թե որ Այտրնյան նաև զիմ քառաֆնեռութունս շուգեր ակնարկել այդ հողավածով: Սույն գործես Բ. տպագրութիւնն³ երբ որ ելնե, Այտրնյան կրնա տեսնել, թե ինչ ուղիղ հիման վրա կառուցված է իմ շենքս և որչափ հաստատուն: Վերջին խոսք մ'ալ. Տերվիշյանի գիրքն քարձը է, ոճն ալ ոչ հույժ ճստակ. սակավուց միայն օգտակար: Ինչո՞ւ այդպիսի անգիտուն տպավորութիւն ինչո՞ւ վանքին տպարանեն կհրատարակվեր...

Ներփակութիւն կգտնես Ալիաբեղաց մեկնութիւնը⁴. շնորհակալ եմ սիրույդ, քանի մը մանր-մունր բաներ նշանակեցի ի լուսանցս, տակավին պետք ունիմ ուսումնասիրելու զայդ: Ուրիշ անգամ կգրեմ:

Ողջ լեր միշտ սիրելիդ իմ և հույժ սիրելի հ. Սուքիաս: Հուսամ ընկալար բառարանիս⁵ թերթերը զորս ղրկեցի ամիսուկես առաջ:

Ողջույն շատ ի կնոջես:

Քույդ Նորայր

(ց. 70, 1878. 235ր. վ. 244, № 97)

4

26 նոյեմբեր, 1886

Սիրելիդ իմ Ե. Սուֆիաս

Վաղիվ պիտի առաքեմ քեզ ճանճնաբարձրալ զՄեսրոպյան նշանագրաց ձառը¹, հանդերձ իմ քանի մի դիտողութեամբք առ առանձինն տետրակի, զոր կարես պահել առ քեզ, զի առի հավասարն: Ի նմին ծրարի կգտնես և 3 թիվ փունջ: Ընթերցա Արեւելք լրագրի զվերջն պատասխանի Նուպարի...

Ճառդ գեղեցիկ է, համբավույդ արժանի... Կխնդրեմ, որ նոր տպագրութեան համար դարձյալ Կ. Պոլիս շղրկես զայն, եթե կարելի է Մանչեստր տպել տուր տպագրութեան, ապա թե ոչ՝ պահե առ այժմ: Կփափագիմ, որ մանրամասնաբար գրես ինձ զկարծիսդ զիմ դիտողութեանց: Այն օրն որ ընտիր տպագրութիւն մի ունենանք մեր ազգային պատմչաց, շատ մութ կետեր պիտի լուսավորվին: Ցավով կսեմ, որ էտ այս չափ տարի հայերեն լեզվի ուսմամբ պարապելու, ոչ Կորյուն կհասկանամ կատարելապես, ոչ խորենացի, ոչ Փարպեցի, միակ հետաքրքրութիւնս սա է, որ իմ անհասկացողութեանս պատճառ ոչ է ծուլութիւն...

Առ ինչ կզորե իմ կամքս, երբ ոչ միայն ամեն դռներ փակ կմնան իմ առջևս, այլև ամեն տեսակ արգելք հարուցանողներ չեն պակսիր: Կարդացիք անշուշտ զՄիսուան²: Դիտողութիւն խնդրեց հ. Գր. Ճելալ³ անցյալ տարի և ես գրեցի ինչ որ կրցա: Ի 226 զմատենիդ սյունակ Բ, գրյալ է.

«Քաջ Լիպարիտ, ուսիր Հոհան
Քրիստոնեից համար մեռան».

առաջարկեցի ընթեռնուլ հետևյալ օրինակով

«Քաջ Լիպարիտ ու Սիր Հոհան
Քրիստոնեից համար մեռան».

շրնդունի՞ս զիմ ուղղութիւն:

Զիւնկիրյան Թշվառներու երկրորդ տպագրության առաջաբանին¹ մեջ թշնամանեց զիս...

(ց. 70, թղթ. 235բ, վ. 245, № 50)

5

21 դեկտ., 1886

Սիրելիդ իմ ճ. Սուփաս

Ամսուս 9—13-ի ընդարձակ նամակդ անշափ հաճույք պատճառեց ինձ, որ ահա ի մի կոյս թողլով գործերս՝ կփութամ ի պատասխանել:

Գարեգնի¹ գրածներեն վշտացեր ես, բացատրությունդ նշանագրածդ² մասին 106 երեսն որում գրած եմ ի լուսանցի. «որո՞ւմ է հ. Գարեգնի նմանությունն, սիրելիդ իմ հ. Սուփաս»: Բազում ամոք առաջ հասու եղած եմ ես Գարեգնիդ գիտության շափույն: ԶԲ տպագրության յուր հրաշալի մատենին³ տակավին չտեսա: Գրած եմ ի Կ. Պոլիս որ հղեն ինձ, ամիս մ'է, որ կսպասեմ և դեռ չընկալա: Անհամբեր եմ տեսնելու թե ի՞նչ ըրած է Ագաթանգեղի և Բյուզանդանդա վերա, և ունի՞ր ակնարկություն մ'ալ առիս: Կուզեմ քննադատել զյուր մատյանն. հոգւածս (չտպած) կհղեմ քեզ:

Արդշույի վերա կարծիք գրածս՝ այժմ կրնամ հաստատել. արդիշո նշանակե արդարեւ ծառա Հիսուսի: Անցյալ օր գնեցի Félix Néve⁴-ի մատյանը *L'Arménie chrétienne et sa Littérature* (Paris, Ernest Leroux, 1886) և կարդացի երես 387—388. «Ebed Jesu ou Abd Ileschoua (serviteur de Jésus), dit aussi Bar Brikha, «Fils du Bén»-ի*»: Տես որ Փելիքս Նևեն ալ օրհնել կթարգմանե զBrik, որմէ Բրքիշո Լանգլուա ուստի կհանե benédiction de Jésus**». Զգիտեմ Բարիզի Temps լրագրին մեջ կարդացի վերջերս, թե Barthélemy Saint-Hilaire հոգւած պիտի գրե այն մատենին վերա ի *Journals des Savants*, անշուշտ կկարդաս զայն: Աթորա ոչ է արուա աթր բառին: Աթր կամ այթր է հունարեն սմթրամն և նշանակե «հոդ», գղ. Article, իսկ աթութա է բառ ասորի և նշանակե նշան (այն թե գղ. signe և թե հրաշք սքանչելիք) և նշանագիր: Հայկազյան կգրե ի բառն աթութայք. «աթ կամ հագ ըստ եբր. բաղդ, և ասոր. է հոդ մասնիկ, նիշ, նշան, որ և այլն. լտ. արթամն, articulus, իսկ ասոր. աթուրա է տառ նշանակեալ: Ժամանակս չնեղեց, որ Payne Smith-ի մեջ քննեմ Հայկազյանն հիշած արթ կամ հաղն և արթաբան: Յուրտն սաստիկ է այժմ ի Ստոկհոլմ՝ տաքուկ սենեկես ելնել կղանդաղեմ: Խնդրեմ շատացիր գիտենալով առ այժմ որ արթ կամ հաղ թվի ինձ զնշանակա հաթ ասորի բառն, զոր և մեկն տառ (հն. սղեխիրն, գղ. Element) (զանց կընեմ դնել զնշանակ վկայությանն, զի անշուշտ ունիս ծննդի), իսկ աթութա բառին համար այսպես կգրեն ասորի հրահանգաց մատյանքն զորս ունիմ ի ձեռքն. 1. «օթվոթօ, օթվօն, օթութօ, Signum, Littera»—alphabeti, Miraculum «Paulin Martin, Grammatica երես 83,—2, «opo, Miracle, հոգնակի օրվօրօ», Syriak reading lessons, երես 32: Շնորհակալ եմ տեղեկությանդ «իբրեւ հոսես թե մեռանիմ» բանին վերա. թվի ինձ, թե անգլիացի ասորագետդ յուր բնիկ լեզվո (անգլերենի) քերականության համեմատ թարգմանած է զայդ: Ըս այսպես հավանել եմ՝ թե սեմական լեզվաց ձև

* Ebed Jese կամ Abd Jeschoua—Հիսուսի սպասավոր նույնպես ասված է Bar Brikha. Bén-ի որդին:

** Հիսուսի օրհնությանը (Ֆր.).

մի է այդ, և ասորվոյն մտած ի հայերենն, ահա փաստս, Մենդոց ԻՁ գլխոյն 7 թվահամարն կըսե. «Քանզի երկեաւ ասել թէ կին իմ է, թե գուցե սպանիցեն զնա արք տեղւոյն» և այլն, եբրայերեն կըսե ճիշտ մեռաւիմի ձևով *եթե գուցե սպանանիցեն զիս արք տեղւոյն*՝ զայս այսպես կժանուցանէ. François Lenormant-ի մատենին La Genève. traduction d'après l'hebreu (Paris, Maisonneuve, 1883) երես 75, որում լուր թարգմանելու ըստ պահանջելու գղ. քերականութիւն *„car il craignait en disant: „Ma femme“, que les gens du lieu ne le tuassent à cause de Ribgâh, puisqu'elle était belle d'aspect“**, հայելու ի ծանոթութիւն *„Le texte hebreu porte „ne me tuassent“, par une forme de construction impossible à rendre en français“***.

Հարց զիս ասորերենի մասին, որ չափ և կամիս. ուրախ կըլլամ եթե սակավ գիտութեամբս կարեմ օգտամատուց լինել սիրելութեանդ... Իցի՛վ հաջողեիր դալ ի Ստոկհոլմ, ետ զատկի ուղևորութեանդ ծախքդ քեն, բնակութիւնդ և ապրուստդ հինեն, ես չկարեմ մեկնիլ ի քաղաքես, բայց եթե Մանչեստրի հօտդ կարե ներել քեզ մի ամսյա բացակայութեանդ, որչա՛փ երջանիկ կըլլայի երկարորեն խոսակցելով ընդ քեզ: Եթե ապահով ես որ բացակայութեանդ ժամանակ մեքենայութիւններ չեն լուծվիր՝ զպաշտոնդ ի քեն խլելու, եթե Մանչեստրի հայք սիրով թույլ կուտան, որ ամիս մի հանգչիս ի Ստոկհոլմ. սրտիս մեծ բաղձանքներեն մին կկատարվեր:

Կորյունի վերա վերջնական կարծիք հայտնելու համար սպասիմ երեւի թիւան Կորյունս, Կորյուն-Աղաթանգեղոս—Փ. Բուզանդ. թերևս այս աշխատութիւնս նոր գաղափար մի զարթուցանե ի մեր միտս:

... Գնեցի շվեդերեն մատյանն (վարք Գր. Լուսավորչի) բայց չեմ իմանար թե ինչ կարևորութիւն ունի քեզ համար, Սիմեոն Մետափիստայա լատին թարգմանութեան մի վերայն թարգմանել է ի հին շվեդերեն, լեզու զոր հատուկ professeur-ներ միայն կրնան մեկնել: Եթե բացարձակ կամքդ է ստանալ զմատենդ կհղեմ քեզ, թե ոչ՝ իմ քովս կմնա:

Ճառիդ քանի մի բառերուն նկատմամբ կգրեմ Սիրելութեանդ հաջորդ նամակով և երբ պատասխանես ներկայիս:

Ահա իմ գիտցած իշոյններս: Աբդիշո (ծառա Հիսուսի), Բարդիշո, Բրքիշո (օրհնել աստված), Գադիշո (եդիշյան պատմութեան), կամյիշով՝ հարգո աստված, Հիսուս... Սեբեոս, տպ. Կ. Պոլիս, 193-ը ը<ստ> տպ. Պատկանյան, 123***5:

Շուփհադիշո (արքեպիսկոպոս Աղվանից Կիրակոս Գանձակեցի, 985):

Բարդիշոյի, գադիշոյի և շուփհադիշոյի նշանակունքը պիտի փնտրեմ Payne Smith⁷: Ողջ լեր, սիրելիդ իմ Սուքիաս: Շնորհավոր նոր տարի և ամեն բարութիւն կմաղթե քեզ՝

Քույդ Նորայր

Սիրալիր ողջույնք ի կնոջես:

(ց. 70, թղթ. 235բ, վ. 245, № 56)

* «Որովհետեւ նա վախենում էր ասելով «իմ կինը», որ տեղի մարդիկ նրան կսպանեն Ռիբգահի պատճառով, քանի որ նա գեղեցիկ տեսք ուներ (Ֆր.):

** Եբրայերեն բնագիրը կրում է ne me tuassent մի կառուցվածքային ձև, որն անհնար է վերափոխել ֆրանսերենի (Ֆր.):

*** Հարավ աստված մեկնութիւնը Պատկանյանին է: (Մանթութիւնը նամակագրին է):

Սիրելիդ իմ ճ. Սուփաս

... Երեքիշյան Կորյունս առաջին ընդօրինակությունն ավարտեցավ, և ի մոռո պիտի սկսիմ զերկրորդը: Կհուսամ, որ գեղեցիկ գործ պիտի ըլլա և բոլորովին նոր յուրում տեսակի: Վաղուց երկնած էի զփափագ երեքիշենիդ. նշանագրած ճառդ նոր գրգիռ մ'եղավ ինձ: Գիտես թե Հայկազյանին կարծիքն է, որ Բյուզանդ է թարգմանություն Կորյուն, ես ալ գրեցի քեզ արդեն, թե և Ագաթանգեղոս է թարգմանություն Կորյուն: Երեքիշյանն կհաստատե ամենայնիվ զայս կարծիս, ոչ ընդարձակ հատվածոց նույն են նման շարադրությամբ, մանրիկ ասացվածոց և բացատրությանց նույնությամբ, զորս շարեցի հանդեպ Կորյուն պատմությունն ի գրոց Ագաթանգեղի և Բյուզանդա: Կորյուն ուրեմ է թարգմանիչ և Ագաթանգեղի, և Բյուզանդա և առաջաբանից գործոց Առաքելոց ու Պավղոսի թղթոց (և թերևս կաթողիկեայց թղթոց): Առավել քան զ200 ժանոթությունս գրեցի երեքիշյանն մասամբ ուղղումս ընթերցվացոց, մասամբ կոշման ի Ս. գրոց, և մասամբ պատմական տեղեկությունս: Ի կատարած պատմությանն Մաշտոցի ավելի զգումարություն բառից հատկաբանությունց Կորյունն, որում ամփոփած եմ նաև Ագաթանգեղի, Բյուզանդացվո գործոց և Պավղոսի թղթոց Հառաջաբանից ամեն նմանությունները, ցուցանելով որ միևնույն քերականությունն է, միևնույն բառերքն, համառոտ ասել՝ միևնույն գրիչն: Իսկ ընդարձակ հատվածոց նույնության համար տակավին չկարեմ ասել թե ումե՞ փոխառած է: Ինչ ինչ կպատշաճի Կորյուն, և ինչ ինչ Ագաթանգեղի և Բյուզանդա. քո աչք սրագույնին այսմ մասին, երբ իմ աշխատությունս տեսնես (ի Ստոկհոլմ որպես ըղձամ) թերևս կարողանաս թափանցել գաղտնուցդ: Ագաթանգեղի հինգերորդ գարու թարգմանություն ըլլալուն վկա են ալլուստ փոքրիկ ընդօրինակությունք խորենացվո և Փարպեցվո: Նոր գլուտ մի հաղորդեմ քեզ, որ պիտանի է նշանագրաց ճառիդ, զՄաշտոց համարիս երկիր գնացյալ ի Սամոսատ, Կորյուն դայդ չըսեր. տպագիրն այսպես ուղղելի է՝ բարձրամբ և ետ վերջակետին (ինչ որ ուղղած եմ նաև զԽորենացվոն զբովանդակն): Իսկ զՀայաստանյացս նախարարությունս և այն տես Բառաքենություն՝, երես 34, «իսկ աշակերտասերն վարդապետին՝ զտարյալսն ընդ յուր երկուս բաժանել, զոմանս ասորի դպրությունն կարգեր (Եղևիս) և զոմանս[ի] հունական դպրությանն անտի ([այսինքն] Եղևսիո) և զոմանս Սամոսատական քաղաքն գոսմարեր»: Գումարեմ նշանակե ի բռնիս ճղել, ուղարկել՝ սովին նշանակությամբ գումար եմ և հավաքեմ հանդիպած եմ այլ ուր ի մատենագրությանս հինգերորդ դարու, թեպետ, զուրն հիշեմ, բայց գտի նշանակյալ Հայ-իտալերեն բառագիրս Ջախջախյանի² զգումարել ուրեք զօրս, այսպես ճղել՝ Mandar xelle truppe: Հույժ կգովեի զՋախջախյանն, եթե այսու միտք հասկացած ըլլար նաև զԿորյուն գումարեն, մինչդեռ նա՝ փոխանակ ներգործական մտք իմանալու, կրավորականով կամ ձայնակրականով կիմանա, և կգրե. «Գումարիլ երթալ յուրովքն»՝ Andare, insieme colla sua gente: Այդ յուր զայս այսպես ուղղելո, տես թե ինչպես գեղեցիկս կպարզվի Կորյուն պատմությունն, Մաշտոց մեա Եսեսիա կես բաժնիվ աշակերտացն՝ որք ուսանեն զասորի լեզու, և զմյուս կեսն կճղե ի Սամոսատ՝ որպեսզի հույն դպրություն պարապին. էգեսիա յուրովք՝ հավասարյոքն»

այնպես գործակցոք կճգնի ի գյուտ նշանագրացն, և երբ կհաշողի՝ հրա-
ժարյալ հպիսկոպոսացն այն սրբոց ([այսինքն] Եգեսիո և Ամգա բյուզան-
դիոն հպիսկոպոսներեն, թվի թե Ամգա քաղաքն Եգեսիա կգտնվեր ի ժամա-
նակին) իջանե ի քաղաքն սամոսատացվոց ուր կպատվեն զինքն հպիսկոպոսն
և քաղաքացիքն՝ իբր վարդապետ այն հայ պատանյաց, որ Սամոսատա դպրո-
ցին մեջ հունարեն կուսանեին: Անդ ի նմին քաղաքի կգտնե Մաշտոց զհեղե-
նակաւն դպրության ճարտար գրիչն Հոռփաւնոս, և այլն և այլն. ըսե թե այնմ
ժամանակի Սամոսատա մեջ նշանավոր դպրոց կայր հունարենի: Այս գյուտս
անշափ ուրախացուց զիս, որ չափ հորինացվո գունդք բառն Գունդք ուղղելս:
Սիրելությունդ պարզեց զՓարպեցի, ես պարզեցի զԿորյուն, կմնա այժմ որ
պարզենք զհորինացվոյն փյունիկեն և զՍամոսն և տաքնապեցուցիչ նմանու-
թյանն «ձեռան»:

հորինացվո «կուտյալ ունեք» ի միևնույն չկրնա՞ր ծառայել Կորյուն
գրածն, երես 3, «Սույն օրինակ և ամեն գիրք հոգեպատումք նշանակյալ ունիւն
զքաջությանս ամեն զորաց»:

Գարեգինն, երես 443 կծանուցանե թե Պողոսի Ալեքսանդրացվո գործն
հրատարակել է հունարեն-լատիներենի 1588, կրնա՞ս ըսել ինձ թե որ գիրս
պետք է փնտռեմ զգրությանդ, ի՞նչ է ճակատ մատնին, և կա՞ արդոք նորա-
գունն տպագրություն. ինձ համար հույժ կարևոր է բաղդատություն թարգմա-
նության Շիրակացվոյն:

Շվետական մատենին համար հատուցի 2 քրովնա, որ է ըսել 2 փրանկ
86 հարյուրորդ. ամոթ կհամարիմ պահանջել և սիրույդ զշնչին գումարդ, այլ
եթե հաճիս՝ ժամանա ևս ինչ թող մնա առիս մատյանդ, որպեսզի քաղեմ
զպիտանիսն ինձ. այժմ հույժ զբաղյալ եմ: Պիտի ընդունես զայն իբր նվեր
պայմանով, որ ինձ վերադարձնես, եթե չթվի քեզ արժանի նշանակության և
պահելու:

Մաշտոց ի Մելիտինո ո՞ր ճանապարհով գնացած է ի Կ. Պոլիս, ընդ ո՞ր
քաղաքս անցած է, կարծեմ հետաքրքրական կըլլա հավելուլ զայս ի նշա-
նագրաց ճառդ, եթե ոչ վրիպեմ, Բյուզանդյան կայսրության արքունի ճա-
նապարհներն նշանակելու են ի Պրոկոպիոսէ, որ և ուսուցանէ զարվեստ գրչու-
թյան աշակերտացն Մաշտոցի, որ էին հույն դպրոցի Օ* «հանդերձ օգնակա-
նոքն» թողլով զկես աշակերտացն Եգեսիա (մինչ դեռ մյուս կեսն արդեն
ի Սամոսատ էր: Իշոյներուն նկատմամբ կգրես սիրելությանդ, երբ պարապ
գտնեմ երթալու Արքունի Մատենադարանն և քննելու ի Payne Smith... Ոչ ոք
ունիմ ի Կ. Պոլիս, որ պիտանի տեղեկություններ հաղորդե ինձ:

Քանի մի բառերուդ համար ըսելիքս այս էր. ընդնշմարել, ներմուծել նա-
խապես աշխատել են հետո և այլն, այս ամեն սիրելիդ իմ հ. Սուքիաս, մեր
արդի գրագիրաց բառերն սիրական են... լեր սիրելիդ իմ հ. Սուքիաս և ըն-
դունե փոխադարձ մաղթանքներս և իղձերս:

Կինս շնորհակալ է քույդ թարգմանությունիցդ և փոխարեն կողշույնե:

Armenian Vicarage 229, Upper Brook Street Manchester.

(ց. 70, թղթ. 235բ, վ. 245, № 78)

* Բյուզանդիոն:

7

19 հունիս, 1887

Սիրելիդ իմ հ. Սուփաս

Անցյալ ամսո 19-ին հղեցի քեզ օրինակ մի իմ Քենաւեր հանդեսս եւ հինգ ամսն ի վեր կսպասեմ լրոցդ: Հուսամ քաջառողջ ես:

Փափստոս Բյուզանդ հոգովածիս¹ մեջ հայոց թագավորաց եւ ազգությանց հիշատակության լրած ըլլալու համար խոհեմութիւն համարեցաւ Կ. Պոլիս մեարիֆին ներկայացնել պրակս որպեսզի հետո շնորհն ոչ զիս եւ ոչ գրավաճառս:

Այսօր ընդունեցաւ նամակ ի Կ. Պոլսե, որում կժանուցանվի ինձ, թե մեարիֆի պատասխանն ռամազանին ետքը միայն կրնա ելնել եւ թե ցուցնավայր պետք է ամենայն ծածկությամբ պահել զՔենաւերն: Վասն որո կխնդրեմ, որ բնավ որեիցե Կ. պոլսեցվո չգրես զՔենաւերս եւ ոչ ուրեք ի Մանչեստր կամ այլ ուր փոխ տաս զօրինակդ:

Բ պրակին գլխավոր նյութն պիտի ըլլա տեսութիւն զքննական քերականության հ. Արսենի Այտընյան²:

Ողջույն շատ ի կնոջս եւ հինեն:

Քույդ նորայր

Armenian Vicarage 223, Upper Brook Street Manchester

(ց. 70, թղթ. 235բ, վ. 245, № 78)

8

24 դեկտեմբեր. 1887

Սիրելիդ իմ հ. Սուփաս

Երեկ ընկալաւ զշնորհյալդ ի 19 ամսույս: Հուլիս ցավեցաւ լսելով, որ անպիտան մարդոց որոգայթն ընկեր եւ մեծ գումար դրամո կորուսեր ես: Հրաժարե բոլորովին ի դրամական գործունեությունից, սիրելիդ իմ... Պարապե ուսմամբ միայն, եւ տուր մեզ ընթերցումն զվավերաբանությանդ, որում կսպասեմ անհամբեր ի բազում ամաց հետե:

Ընդ թուղթույս հղեցի քեզ այսօր Քենասերի երկրորդ պրակն¹: Այս անգամ բաղձանացս համեմատ մաքուր շեղավ վիմագրությունն: Կերեի թե պատճառն հնացեալ թանաքն է որով գրեցի, կխնդրեմ, որ ըստ կարգի փութով հաղորդես ինձ կարծիսդ, զի լուսավորվիլ կցանկամ: Զուրկ եմ ի Զամչյանես² որ ի Կ. Պոլիս արկղ կքնանա, եթե ունենայի զան այժմ, ուրեք-ուրեք ավելի համարձակությամբ պիտի կարենայի խոսել: Այժմ կպատրաստիմ զերեքիջյան Կորյունն, որ՝ ինչպես պիտի տեսնես ի Քենաւերի, պիտի տպագրվի ի Պետերբուրգ, նախքան զտպագրությունն կհղեմ քեզ ձեռագիրս: Ետ պատրաստելո գնորդուն պիտի հրատարակեմ զԳ պրակն³, եթե Ա եւ Բ պրակաց 100 ական-օրինակք վաճառվին յուրաքանչյուր պրակի 64 երեսաց համար (150—160 օրինակ) կծախեմ 100 փրանկ: Կ. Պոլիսո գրաքննությունն թույլ տվավ Ա պրակին վաճառման, այլ ի ձեռն վաճառեցի եվրոպացի գրավաճառի եւ ոչ հայազգեո. երանի հայ մատենագրացս՝ դրություն, օգնություն, խրախույս, վարձատրություն, պատիվ, ամենայն ինչ առատությամբ կվայելենք:

Առնի անդամոյն համար՝ հթի ներքի ըլլար ավելի հայտնությամբ խոսել՝ պիտի ցուցանեի... Փալստոսի⁴, որ 50 սպիօք ծածկեալ վարոցի որպեսզի monumental մեծութիւն չենթադրեի: Ստուգիվ առնի անգամն համարեն բանք Բյուզանդա, ապա թե ոչ չե զայն անդամ բացյալ առաջի ամենեցուն ցուցանել, բնավ անիմաստ խոսք մի կըլլա: Իսկ նախնային է բառ պարսիկ չեւտե, որ նշանակե թխագոյն, կա նաև պատկերն ճեւտե, որ Գեորգ Տեր-Հովհաննիսյանի պարսկերեն-հայերեն բառագրոց⁵ մեջ կմեկնվի: Քջի որո հայրն է արարացի եւ մայրն այլմէ ազգե:

Շնորհակալ եմ Ինճիճյանի հնախոսութենեն⁶ տված տեղեկությանդ, Ինճիճյանս՝ ալ ի Կ. Պոլիս արկեղ է: Բազում հայ եւ օտար մատյանք կպակասեն ինձ աստ, նման եմ այն կես խելոք եւ կես հիմար մարդոց, որ առանց կարելի դոր գործոց, զմեկի ծայրիվ կերպակերպ ի փայտյա զարմանալիս կճարտարեն: Շվեդերեն Ագաթանգեղի վրա միտք ունիմ ի Քենաւերի հոգված գրելո, վասն խնդրեմ փոքր մյուս ես ժամանակ թող զայն առ իս, իսկ զԵկրագունդդ՝ կծրարեմ Ը<նդ> Քենաւերի: Չեմ ընդուներ զԱրեւել⁸, երկու տարի առաջ գրեցի, որ հղեն ինձ հետաքրքրական թերթօն եւ ղդինսն պահանջեն իմ գործակալի: Եվ ոչ պատասխան տվին: Կխնդրեմ որ ամեն հոգվածդ հղես ինձ մի օրինակ կուզեմ տեսնել զմեկնութիւնդ Փաթագրքեսի:

Տիկին Bazterre-ի հետ (ծնյալ Տամատյան) տակավին տեսնված չեմ. հթի առիթ ունենամ կհաղորդեմ նմա ղողջունսդ: Չե՞ս ուզեր նամակ մի դրել առ աշակերտուհիդ եւ հղել առ իս, որ հանձնեմ նմա:

Տիղիս քաղաքի «Նոր-Դար» լրագրի մեջ ընթերցա նամակ⁹ ի Պետերբուրգի որոսմ ժամանակագիրն խոսելով զիմ Քենաւերե կծանուցանե, թե բազմոք առաջ քան զիս Ք. Պատկանյան¹⁰ ցուցած է յուր ուսերեն մի հրատարակության Արարատա եւ Սարարատա ուրիշ-ուրիշ լեռներ ըլլալն: Գեր<ապատիվ>՝ Օրմանյան գրեց ինձ էջմիածնե. «Քենաւերի» Ա տետրը ղոր ի մյուսին բերած էի, շատ ուրախությամբ եւ հետաքրքրությամբ ձեռքե-ձեռք պտտեցալ ճեմարանի ուսուցչաց մեջ, որս ծանոթ անուններ կան:

Եթե հաճեցար ընդ իմ երկու ուղղագրությանս Եզնկա¹¹, պիտի հաճիս նաև ընդ այլ բազում ուղղագրությանս նույն դրոց... Մաղթելով սիրույդ շնորհավոր նոր տարի եւ սփոփության վշտացդ, մնամ ի սրտե քոյդ:

Կինս սիրով կողջունե սիրելիութիւնդ:

Նոյեմբեր 3-ին գեղեցիկ լուսանկար մի հանեց մեր Ոսկար Բ թագավորին:

(ց. 70, թղթ. 235ր, վ. 245, № 146)

Սիրելիդ իմ Բ. Սուփաս

Ընկալա զգրեալդ 17 փետրվարի, հանդերձ ծրարիվ գավառական բառիցդ եւ հոգվածիդ գԱստվածահայտնության տոնե (Արեւելք, 1 փետրվարի 1887 ն. տ. թիվ 916 եւ այլն): Հույժ շնորհակալ եմ զԳավառականացդ, որոց ակն ունիմ օգտիլ եւ ճոխացնել զիմ Քաղվածույս. այլ առ այժմ զի բոլորովին Կորյուն նվիրեալ է ժամանակս, կխնդրեմ որ թողուս առ իս մինչև Կորյունն ավարտի, ետ այնորիկ կընդօրինակեմ եւ կվերադարձնեմ առ սիրելիությանդ զձեռագիրսդ:

Ձեռագրվածք Արևելք լրագրի այսօրվան թղթատարով հղեցի առ Քեզ առանց հանձնարարող, հուսամ ապահովեամք կհասնի ի ձեռսդ: Կարդացի զայն, ինչպես կկարդամ միշտ զգրությունսդ, ախորժելով և շահելով:— Գեղեցիկ է և տնայնացի և յսելուդ ի վերա բերել, որ չես ուզեր ըսել թե հայն նա է: Զկղեմա Ալեքսանդրովն stromateg* թարգմանյալ ես հաճախապատում, ինչպես և ես դրած եմ ի Բառարանիս¹. այլ անցելով ամսյան՝ ընթերցումս գրիչ ի թվին ղնվսեբեա Քրոնիկոնն (տպ. միահատոր, 1818)² զոր իմէ խնդրելո քաղաքիս Արքունի մատենադարանն գնեցի ի Վենետիկ, գտի ի մասն Ա, երես 89. «Միաբանի ընդ մեզ հայսմիկ և Կղեմեա առաջնում ստորմատին, դրեալ զայս ձև օրինակի»։— Կհիշես ի Մատթեոսէ Ուռհայեցվո (տպ. Երուսաղեմ, երես 209—212)³ զբանս Գազկա առ Կոստանդին Տուկիժ ղժամանակն ծննդյանն Քրիստոսի. այլ այդ բանք Գազկա ասյալք և բառ առ բառ ի ճառն Անանիա Շիրակացվո ի հայտնություն Փրկչին: (Տես Անանիայի Շիրակացվո մնացորդք բանից, տպ. <ազրություն> Ք. Պատկան- <յան>, Պետերբուրգ, 1877, երես 11—12)⁴, այս իմ գլուտ է, ղի Պատկան-յան ոչինչ ծանուցանե, և ոչ տպագիրն Մատթեի Ուռհայեցվո:— Հուլիս հա- ճեցա Ը<ստ> մեկնությանդ Ավագ Հինգշաբթու շաբաթանին «Այսօր կանգնեցավ ավագան մկրտություն ի թողություն մեղաց-մերոց», կփափա- գեի տեսնել, թե ինչ գրած է հ. Գ. Ավետիքյան ի Բացատրություն Շարակա- նաց⁵:— (Կղեմաս Եգիպտացի, հռչեցյալն հնդկական նավագնաց, յուրում Քրիստոնեական տեղագրության և այլն)։— ԶՓարպեցվոյն բառն փաթաղիկես հնդկական կհռչես, և կհամարիս թե հունական բիտալիոսիոս (Alex. 1122, ա.) բառն է, «որ ղեկավար ըսել է, — զի ինքն (խորենացի) էր, որպես երևի, առաջնորդ ապարազլուիս այդ հունասեր և հունակողմ շարժմանց»։ Մեկնությունդ, ներք որ ըսեմ, չգոհացուց ղիս, մինչև ցարդ միշտ ի հունա- րեն լեզվն ստուգաբանելու փորձեր եղան փաթաղիկեսիդ, այսպես և հ. Ար- սեն Բագրատունի⁶, որ ուրեք ի ձեռագիրս յուր ուզած է մեկնել ի հույն բառն Բաղադիմա, որ նշանակե bavardage ou bavard, quirompt les oreil- les (Alex. 1079, որմն և ածականն բաղադիմիֆոս, որ նշանակե bruyant**), այլուր նույն հ. Արսեն (կարծեմ ի ծանոթությունս պսակի ճառին Դիմոսթի- նեան) կուզե ստուգաբանել ի հույն անվանն բատալոս: Ես երիս ինչս կդի- տեմ ի փաթաղիկես բառիդ. ա. թե հայ արեղայից բառ է այդ, այսինքն՝ այն արեղայից որ անճաշակ էին ի հունական ուսմանց, և ծուռ աշոք կնային հունականավն վարժյալ թարգմանչաց, հետևաբար չեմ կարծեր որ յույն բառ ըլլա, այլ կամ ասորի է, կամ պարսիկ (եթե չէ աղավաղություն հայե- րեն բառի, ինչպես կրնա կարծվիլ ի կես վերջավորությունն). բ. այդ բառն խորենացվո անձին համար չէ, այլ գրեմոյն. «Ո՛չ ղլուսավորին և զտգիտա- կալած զգրյանն նորա՝ առ անգիտության փաթաղիկես կոչէին»։ գ. եթե հեզ- նական մտքը այդպես կոչված ըլլային խորենացվո գրությունն, կարծեմ Փարպեցը առ անգիտություն չէր ըսեր:

Ես բոլորովին մոռացած էի զգրածդ ի ճառիդ հաղագս հայերեն նշա- նագրաց⁷ և միայն ուշի ունեի զԳարեգին, զԱ. Մ. Գարազաշյան և զԳր. Խա- լաթյան: Կըսես թե անճեբեի փաստեռ ունիս խորենացվո պատմության

* Շատախոսություն կամ շատախոս, որ ականջ է ծակում:

** Աղմկալի, աղմկարար (ֆր.):

քան զՓարպեցվոյն երեց ըլլալուն, բարվոք է, հարո՛ ինձ առարկութիւնս, գրե մի ըստ միոշե զփաստսդ և եթե խախտես, քակտես զիմ կարծիս, սիրով զպարտութիւն խոստովանիմ: Կան առ մեզ բազում ենթադրութիւնք արմատացլաք և արձանացլաք: (Գարեղնի Դպրութիւնն լի է այսպիսոք) ես ի բազում ամաց հետե հակառակութիւն կզդամ այդ ենթադրութիւնից, և կուզեմ որ ճանապարհ բանալ, առ այս կձգտեն իմ ամեն քննութիւնք և ուսումնասիրութիւնք: Սիրելութիւնդ միտքն զերծ է, դիտեմ, ի նախապաշարմանց, բայց որովհետեւ այժմ էական խնդրո մի մեջ ալակարծիք երեւցանք, ես պատրաստ եմ ընդունել զվարդապետութիւնդ՝ եթե իսպառ հերքես զիմն, և կհուսամ, որ, եթե ես հաջողիմ լուծանել զառարկութիւնսդ, իմ կողմն կանցնես և ի միասին կտապալենք զհնացյալ և պառավյալ ենթադրութիւնս Մխիթարյանց ումանց: Ետ հրատարակելն զԲ պրակ Բննաւերիս, երկու նոր վկայութիւնս գտի՝ հորինացվո Պատմության ետ 486 ամին գրեալ ըլլալուն: Կհիշե՞ս արդյոք, որ ի հարցաքննության 1857 ամին երկու դիրս մրցանակ տվիր աշակերտիդ, Պարզացելոց զՔերականության⁸ և զChronologie Universelle, par Ch. Dreyss (Paris, Hachette, 1853) Chronologie մի ի հատորու de l'Histoire Universelle, publiée sous la direction de M. V. Duruy⁹: Անցյալ օր երբ կթղթատեի զմատանդ, դիպվածով Ե դարու 487 տարվոյն համար նշանակլալ տեսի հետեյալդ՝ 487. Arménie—L'Histoire de l'Arménie et d'une partie de l'Asie est traitée par l'Arménien Moïse de Khorène, fort instruit dans les lettres grecques, qui a visité Antioche, Alexandrie, Rome et Constantinople il a écrit en grec¹⁰, երես 177: Այո, մի ծիծաղիր en grec զոր կ'նորարանե մատենագիրդ նաև երես 168 տողունք զանրանկանդ en gre բայց որովհ հաշվով գտած է Ch. Dreyss թե հորինացի ճիշտ 487 ին հորինած է զյուր պատմութիւն. ահա նյութ արժանի մեծի հետաքրքրության, զոր խնդրեմ ի սիրույդ լուսավորեալ: Այս առաջինն: Իսկ երկրորդն է զգլուտե նշխարաց Թադեի և Սանդիստա, երյուք յոթնեկոք առաջ նվեր ընկալա ի Տ. Եղյանցե՝ զՊատմության Ասողկան (տպ. Պետերբուրգ, 1885)¹¹ ուր գտի երես 82, Բ, Բ, «Իսկ ավուրս Վահանա (Մամիկոնեանի) հայտնեցան նշխարք սուրբ Առաքելոյն Թադեոսի և Սանդիստո և սրբոյն Գրիգորի Լուսավորչին մերոս: Կտեսնես սիրելիդ իմ հ. Սուքիաս, թե որ չափ կղորացնեն զիմ կարծիս այս երկու նոր վկայութիւնք:

Կա մյուս ևս երրորդ օժանդակ հաստատիչ իմ կարծյաց. այն է բանն հորինացվո զմատան բառե, զոր հիշած եմ երես 13 Բ պրակիս¹², բայց առայժմ մնա այն, զի հարկե ուշի ուշով ծայրիծայր ընթեռնուլ զԵղիշե. զՓարպեցի և զՀոհ. Կաթողիկոս առ ի կարող լինելո շրել զբանս իտալերեն թարգմանութիւն հորինացվո, Ս. Ղազար, երես 110 և ես այժմ անպարապ եմ:

Երկու տեղիս չի երևի թե լավ չեմ բացատրած զիմ միտս, զի այլ ինչ հասկացել ես քան զոր ես գրած եմ: Թողում զառաջինն, զի հույժ կերկարի նամակս, և հիշեմ զերկրորդն: Կգրես. աղարծյալ եթե գոյր կատարյալ պատմություն, ընդհե՛ր Հովսեփա հրաման առ Կորյուն հղել՝ նորոգ գրելո և ըն-

* Տպագրված պատմ. Մ. Վ. Դյուրույի առաջնորդությամբ (Ֆր.):

** Շեյախտան,— Հայաստանի և Ասիայի մի մասի պատմութիւնը ներկայացված է հայ Մովսէս հորինացու կողմից՝ հիմնալի ուսյալ հունական գրականության մեջ, որը այցելել է Անտիոք, Ալեքսանդրիա, Հռոմ և Կոնստանդինոպոլիս, գրել է հունարենով (Ֆր.):

գե՞ր ոչ և Կորյուն հիշել զայն»։ Արդեւս գրած եմ երես 18. «Կորյուն վարդապետի պատմութիւն չի կրնար համարվիլ կատարյալ պատմութիւն, եւ պետք է ենթադրել թե ետ նորա մի ոմն երկրորդ կամ ի կրտսեր թարգմանաց, դասակից հորեմեացվոյն, գրած է ընդարձակագոյն զպատմութիւն Սահակա և Մեսրոպա» և այլն։ Եթե ունենայի զայն գրչագիրս էջմիածնի, զորս կհիշե Գարեգին երես 385—386¹², թերեւս ավելի հաստատական եւ հաղթահարիչ փաստեր կարենայի ի մեջ բերել. այլ գիտես զիմ նշանաբան «որքան կարիմ՝ զայն առնիմ»։

Փարպեցիդ և Խորենացիդ վաճառականն ոչ այլ ինչ է ինձ համար, բայց 12 նույնաբանութիւնից երկացունցդ աճեցուցիչ 13, այդ ևս ի նմին հասարակաց աղբերն առել է. կուզես կատարյալ պատմութիւն անվանե, կուզես այլ ինչ։

Խնդրեմ ամեն հողվածոցդ և ի հրատարակութիւնից միշտ օրինակ մի հղես առ իս։ Հուսամ հարգեցին այդր զբանախոսութիւնդ ի 21 փետրվարի, ո՛ր էր թե կամ ես առ քեզ ըլլայի կամ դու առ իս։

Վերջին գլուխս։ Երես 26 Ազաթանգեղի (ա տպ.)¹³ գրել է «բանալ զգորունս Ալանաց և զիւրոյ պահակին»։ Զիորո պիտի գրվի զիւրոյ մեծ ի փոխանակ մանր *ce n'est pas plus difficile que ça**. Կոլումբոսի հավկըթին պես։

Երեկ թուղթ ընկալա ի Վիննայե, որով Մխիթարյանք կխնդրեն ստանալ զՔննասեր։ Ընդ վենետիկյանս ամեն հարաբերության կտրած եմ, եթե այս սկիզբն է բարեկամական հաղորդակցության ընդ վիննականս շատ ուրախ պիտի ըլլամ։ Հղած էին նաև թիվ մի Ամսօրյա ճանդեսս, որո բովանդակութենն հույժ ախորժեցա, խնդրեցի որ բաժանորդ գրեն զիս։

Այժմ թաղյալ եմ ի Կորյուն։ Պիտի հղեմ 24 երես իբր ճաշակ առ *S<երն>* Եղանց, որ անհամբեր կսպասե։ Պիտի հղեմ և քեզ ամբողջ օրինակ մի որպեսզի պարապով քննես զայն և օգնես ինձ լայնածավալ գիտությամբ։ Վաղիվ պիտի հղեմ սիրույդ լուսանկար մեր թղթատարին։ Ողջ լեր միշտ և ընդունե զիմ սեր։ Քույր։

Մի զրկես զիս ի ստեպ, ստեպ թղթագրութիւնեդ։

Ողջույն շատ ի կնոջես։

Armenian Vicarage 229, Upper Brook Street Manchester

(ց. 70, թղթ. 235բ, վ. 245, Ֆ 169)

10

15 մարտ, 1900

Մեծապատիվ տ. հ. Տեւ Աստվածատրյանց

Ընկալա զՁեր քարտեսն փետրվար 1-ի (հ. տ.) կպատասխանեմ հարցմանցդ համառոտիվ։

Ա. Մնած եմ ի Պերա Կոստանդնուպոլսի, ի 4/16 մարտ, 1845։

Ը Հորս անունն Հովհաննես, մորս Հովիանն։

Կ. Աշակերտ եղած եմ Վենետիկ Մխիթարյան հայոց դպրոցին ի Պերա, և 1854 աշնան գնացած եմ ի Վենետիկ ք. Ղազար վանս նույն Մխիթարյան

* Դա ոչ ավելի դժվար է... (Ֆր.)։

հարց: 1857 են ի վեր մանավանդ եռանգությամբ պարապած եմ հայերեն և Գաղղիերեն լեզվաց ուսման:

Դ. 1866—1868 ամաց մեջ ուսուցիչ եղած եմ հայերենի և գաղղիերենի Ռափայելյան վարժարանի Վենետիկ Մխիթարյանց, 1870—1872 ամաց մեջ ալ ի Մխիթարյան վարժարանին, որ ի Քաղքեղոն (ըստ թուրքաց Գառը քեռ):

Ե. Մինչև այսօր կպարապիմ հայերեն լեզվի և գրականության: Կբնակիմ ի Ստոկհոլմ 1882 են ի վեր, ուր և կփափաղիմ մեռնել և թաղվել սիրելի-վոյս քով:

Զ. Հրատարակած եմ՝

1. Հայկական բառաբանություն. Կոստանդնուպոլիս, 1880¹ (ընկալա 500 ֆրանկ իզմիրյան մրցանակեն):

2. Քննադատություն նուպարյան թարգմանության Վիկտոր Հյուկոյի Notre-Damին, Կոստանդնուպոլիս, 1884².

3. Բառգիրք ի գաղղիերեն լեզվի ի հայերեն (սիրելիվոյս 1500 փրանկի նպաստավորությամբ), Կոստանդնուպոլիս, 1884:

4. Քննասեր. պրակք Ս և Բ, Ստոկհոլմ, 1887, վիմագրությամբ:

5. Տեղեկութիւնք ի գիրս պատմության Ստեփանոսի Տարոնացվո Աստղիկ կոչեցելո (հանյալ ի Գրականական և պատմական հանդեսի Մոսկվա, 1889:

6. De l'Urgence d'une édition critique des textes arméniens (այսինքն թե անհրաժեշտ կարևոր է հայ բնագրաց քննական հրատարակությանն), Հռոմ, 1892:

7. Կորյուն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տիգրիս, 1900 (ընկալա 1000 փրանկի պարգև ի մեծ Տ. Առաքել Մատուրյանց (որ և բարեհաճեցաւ յոր ծախովք տպագրել տալ):

Ձեռագիր երկասիրութիւնքս շատ են, ոմանք ավարտյալ, այլք գրեթե ավարտյալ, և այլք կիսատ: Ավարտյալ երկասիրութիւններս ամին 1895 Տ. Գվիդոն Լուինյան ստացա 500 (հինգ հարյուր) զմրցանակի զՔննադատութիւն Հայքուսակի կամ Հայկական բուսաբանության, հորինելո ի հ. Դեվոնդ վարդապետ Ալիշան (Վենետիկ, 1895)³ և ապա նվիրյաց զայն Մխիթարյան հարց Վիեննա (տես Հանդես ամսօրյա ծածկոյթ 1898 մարտի ամսաթերթին): Կաշխատեմ երկրորդ հրատարակության Քննադատությանս, որ քառապատիկ ընդարձակ պիտի ըլլա քան զառաջինն: Նախնիք վերնագրյալ երկասիրութիւնս⁴ մեջ ունիմ 10000 և ավելի սրբագրութիւնս մեր նախնյաց մատենագրութիւնց, մանավանդապես պատմագրաց, սկսյալ Ազաթանգեղի մինչև ի Զաքարիա սարկավազ: Մյուս ձեռագիր երկասիրութիւնցս գլխավորներն են՝ Բառագիրք ստորին հայերենի (ԺԱ—ԺԵ դարք), Հայ պարտեզ (հավաքումն անվանց բուսո, Հայքուսակեն բոլորովին տարբեր ոճով):— Բառք Գաղղիանոսի (վեցհարյուրիվ չափ բուսական, բժշկական և անդամագիտական բառք, հանդերձ հուլն, լատին, գաղղիերեն, արաբացի և պարսիկ հոմանիշներով).— Ռամիկ տաղարան (երեք հարյուրիվ չափ՝ տաղեր սիրո, ուրախականք, տրտմականք, պատմականք, խրատականք, և այլն). Գավառական բառք:

Է. Գրած եմ հոդվածներ Կոստանդնուպոլսի այլևայլ հայ լրագրաց մեջ, նոյնպես ի Մշակի և զանազան հանդեսներու մեջ (Բազմավեպ, Հանդես ամսօրյա, Լուսմա): Թուրքիո հայոց կոտորածներուն առթիվ գրած եմ շվե-

դերեն հոգվածներ Ստոկհոլմի... Stockholms Daybhrol լրագրաց մեջ: Վերջին լրագիրն ինքնաբերաբար վարձատրեց զիմ հոգվածը: Հատուցանելով՝ 100 շվեդական քրովնա (140 փրանկ) որո 40 քրովնոյն նվիրեցի նոյն լրագրին՝ ի նպաստ հայ որբերուն և այրիներուն:

Իմ անձի մասին այսչափ միայն կըսեմ, որ շատ ավելի ծառայութիւն կարելի մատուցանել իմ սիրելի ազգին՝ եթե գտած ըլլայի զայն նվիրական և բարոյական ձեռնարկութեանը, զոր կհուսայի: Քառասնամյա անդուլ անդադար պարապմունքս հայերեն լեզվի և գրականութեան պտղաբերած են ինձ 2000՝ ֆրանկ, այլ և բոլոր սրտնեղութիւն և դառնութիւն: Ուսմանս համար երախտապարտ եմ Վենետիկո մեծապատիւ Մխիթարյանց, վշտացուցած են զիս, ես ալ զիրենք. բայց և ի սրտե ներած եմ իրենց, կփափագիմ որ իրենք ևս ներեն ինձ իբրև ճշմարիտ աշակերտի հեղութիւն վարդապետին: Օրն օր կսպասեմ մահվան, և կբաղձամ մեռնիլ հաշտ ամենուն հետ: Բարի փափագներով լցված էի. փափագներս և ոչ մին կատարվեցավ: Անհամար գաղտնիք հայերեն լեզվի և գրականութեան պիտի իջնեն ընդ իս ի գերեզման:

Ք. Խորին մեծարանք Հ. Ն. Բ.

(ց. 70, քղթ. 232բ, վ. 249, ք. 196)

11

6 մայիս, 1902

Սիրելի վարժապետս հ. Սուփիաս վ.

Ընկալա զԲյուզանդեան ժողովածո՞ւ, և ախորժելով կարդացի. շնորհակալ եմ: Ես միութիւն և միաբանութիւն սիրող եմ. Հայաստանայց եկեղեցիկն պարտական էր ընդունել զժողովոյ, մտածելով, որ վեցհարյուրե ավելի Հայք չկարին միանգամայն մոլորիլ և հերետիկոսութիւն տնկել ի տան տեառն:

Զբոնգոս» թարգմանած են «թվատ» (երես 30) ինչպես և Գաթրճյան՝ «թոթով» (Տիեզ.) բ. 447, 448²:

Մեր նախնիք թարգմանած են «ծանդախոս» (թուղթ Հովհ. եպիս. Երուս. առ Աբաս Կթ. Աղվանից, տպ. էջմ. 1896, երես 9, և Մխիթար Գոշ³, Արարատ. 1901, փետրվար, երես 125բ):

Ի Բանասերի, 1899, գիրք Գ, 267—279 սրբագրեցիր զՓարպեցվո Պատմութեան Հառաչաբանն: Բայց ես վաղ ի Լումայի, 1896, գիրք բ, 309—328, հրատարակած եմ զբովանդակ Հառաչաբանդ տեղափոխութեամբ, ցուցամբ չորս ընդհատութեանց (lacunes)* և ծանոթագրութեամբ: Գիտես որ նա և ի Հայկ. բառքն. 4, երես 80, թիվ 82, ուղղած եմ զՀառաչաբանիդ կարգն մասամբ:

Ունի՞ս տեղեկութիւն զիմ տասն հոգվածոց, որ հրատարակեցան ի Մշակի (1898 հոկտեմբեր—1899 հունվար)⁵, ուսումնասիրութիւն Մ. Խորենացվո...:

Սկսած եմ պատրաստել Մովսես Խորենացի մատենագիր և թարգմանիչ: Ի հավելվածի պիտի հրատարակեմ ինչ որ ի Վիստոնյանց մինչև ցայսօր գրալ է զԽորենացվո: Երախտապարտ կմնամ եթե պարապով բարեհաճիս հաղոր-

* Վրիպակներ:

դել ինձ զցանկ ամենայն դրվածոց զհորենացվո՝ որչափ գիտես: Ի Բազմա-վեպի 1844, 202թ—203ա, գրած Ե. Ղ. Ստեփ. Նաղրճյան⁶ «առ այս ի դեպ պատմէ թուղթ» Բագարատա ուրումն հայո որ գրե Աթենա «առ բարեկամ յուր Սուրեն ի ժամանակի Մարգարեացն պարսից [ըսել է աման 514—608] հորդորելով զնա զի բարինք դաստիարակությամբ վարժեսցե գորգիս յուր» և այլն, հետո ի մեջ կրեբն զբանս Բագարատա առ Սուրեն, որս կհիշվին պա-տեհագմն (Հայկա) ընդ Բելա, գեղեզմանքն Արամ և Նյուֆար:

Ըստ ...սովորության Մխիթարյանց՝ Նաղրճյան չի նշանակեր զյուր աղ-բյուրն: Ծանոթ է սիրելիությանդ այս Բագարատ և յուր թուղթն առ Սուրեն: Եթե չեն կեղծիք՝ ապա ուրեմն 514—608 կայր պատմությունն հորենացվո և անտի առած է Բագարատ:

Երբ պիտի կատարես զհորելյանդ քահանայությանդ: Մաղթելով որ միշտ քաջառողջ ըլլաս, մնամ սիրո և մեծարանց ողջունիվ:

Քույր Ն.

Très R. P. Sukias Dr Baronian 15, Rue des Halles
Rois—Colombes (Seine) (France)

(ց. 70, թղթ. 235թ, վ. 250, թ. № 103)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1 Սուքիաս Պարոնյանն ապրում էր Մանչեստրում:

2. Նկատի ունի ս. Ղազարի Մատենադարանը:

3—5 Հիշյալ աշխատությունները մնացել են չտպագրված:

6 Նորայր Բյուզանդացի, Բաղդիթ ի գաղղիներն լեզվե ի հայերեն, Կ. Պոլիս, 1884:

7 Michel Breal (1832—?)—Ֆրանսիացի բանասեր, գրել է Ֆրանսերեն և գերմաներեն, Ֆրանսիայի բարձրագույն դպրոցների գլխավոր տեսուչ: Ունի մի շարք հետազոտություններ նվիրված Մերձավոր Արևելքի գրականությանը:

8 Մելիքսեղեկ—սրբացած ասորի քահանա, գրական հերոս:

9 Մյուլլեր Ֆրեդրիկ Մարքս (1823—?)—գերմանացի արևելագետ: Երբայագետ և սանսկրի-տագետ, մի շարք դիտական հաստատությունների պատվավոր անդամ, բազմաթիվ մենագրու-թյունների և հոգվածների հեղինակ:

10 Գարրիել Ավետիքեան, հաշատուր Սյուրմէլեան, Մկրտիչ Ավգերեան, Նոր բաղդիթ Հայկազեան լեզուի, հատոր առաջին, հատոր երկրորդ, Վենետիկ, 1836—1837:

11 Եւսեբի Պամփրիեայ Կեսարացույ ժամանակակից երկմասնեայ ի հայերեն թարգմա-նութենէ եղելոյ ի յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց: Թարգմանեալ ի լատին բար-բառ աշխատասիրութեամբ հ. Մկրտիչ վարդապետի Մխիթարեան Ազգերեանց, մասն Ա, ի վէ-նետիկ, 1818:

12 Եւսեբիոսի Կեսարացույ Պատմութիւն եկեղեցւոյ յեղեալ յասորոյն ի հայի հինգե-րորդ դարու, պարզաբանեալ նոր թարգմանութեամբ ի յոյն բնագրէն ի ձեռն Աբրահամ վ. Ծա-րեան, ի Մխիթարեանց, ի վէնետիկ, 1877:

2

1 De Lagarde Paul Antuan (1827—1891)—Գերմանացի արևելագետ, հայագետ, Գետտինգենի համալսարանի պրոֆեսոր, ունի բազմաթիվ ուսումնասիրություններ Պարսկաս-տանի և Հայաստանի պատմության և լեզվի ու գրականության վերաբերյալ:

3

- 1 Նկատի ունի Հ. Սերովբե Տերվիշյանի «Հնդեվրոպական նախալեզուն աշխատությունը, Կ. Պոլիս, 1885:
- 2 Ցաղըճյան Հ. Ստեփան—Մխիթարյան միաբանության անդամ:
- 3 Բառաքնության հոգվածը երկրորդ անգամ չի տպագրվել:
- 4 Մնացել է անտիպ:
- 5 Ռ՝ր բառարանը նկատի ունի, անհայտ է, քանի որ Ն. Բյուզանդացու միայն մի բառարան է լույս տեսել (1884 թ.), իսկ մյուսները մնացել են անտիպ:

4

- 1 Պարոնյան Սուքիաս, Հայկական նշանագիրք, «Երկրագունդ», Կ. Պոլիս, 1884, № 5, էջ 291—297, № 6, էջ 347—357, № 7, էջ 395—402, № 11, էջ 491—498, № 12, էջ 539—540, 1885, № 12, էջ 551—555:
- 2 Ալիշան Հ. Ղևոնդ: Սիսուան, Համադրություն. հայկական Կիրիկիո-և Լեոն Մեծագործ, Վենետիկ, ս. Ղազար, 1885:
- 3 Հակոբոս վ. Զելայան, հայագետ, Վենետիկի հայ միաբանության անդամ:
- 4 Վիկտոր Հյուգո, Թշվառներ, Թարգմանություն, Գրիգոր Զիլինկիրյան, Զմյուռնա, 1868, 1885, հ. Ա—Ժ:

5

- 1 Նկատի ունի Գարեգին Զարբանալյանին:
- 2 Տես № 4 նամակի № 1 ծանոթագրությունը:
- 3 Զարբանալեան Գարեգին, Հայկական մատենագիտություն: Այբուբենական ցուցակ տպագրության գիտել մինչև առ մեզ եղած հայերէն հրատարակութեանց, Վենետիկ, 1883:
- 4 Felix Neve (1816—?)—Բելգիացի արեւելագետ, հայագետ, փիլիսոփայության դոկտոր-պրոֆեսոր, ակադեմիայի անդամ, գրել է մի շարք հայագիտական ուսումնասիրություններ:
- 5 «Պատմություն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հրակլն», ի լոյս ած. Գ. Պատկանեան, ս. Պետերբուրգ, 1879:
- 6 «Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ Հայոց պատմութիւն», ի Վենետիկ, 1858:
- 7 Robert Payne Smith (1818—1895)—Անգլիացի արեւելագետ, Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր: Նամակագիրը նկատի ունի Սմիթի «The sanrus Cyrillacus» (Օքսֆորդ, 1860—1895) բազմահատոր աշխատությունը:

6

- 1 Նորայր Բյուզանդացի, Հայկական բառաքնություն, ուղղութիւնը ընթերցուածոց մատենագրութեանց նախնեաց, Կոստանդնուպոլիս, 1880:
- 2 «Բառարան յիտալական լեզուի ի հայի, ի տաճիկ բարբառ, հայր Մանվել Զախախեան Կիւմիշլիանեցւոյ, ի Վէնէտիկ, 1804:

7

- 1 Նորայր Բյուզանդացի, Փալստոս Բյուզանդ, «Քննասեր» (վիմագիր), պրակ Ա. Ստոկհոլմ, 1887:
- 2 Նկատի ունի Ա. Այսընյանի «Քննական քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի», Վիեննա, 1866:

8

- 1 «Քննասեր», Բ պրակ, Ստոկհոլմ, 1887:
- 2 Նկատի ունի Զամյանի «Քերականություն հայկազեան լեզուի» գիրքը, Վենետիկ, 1779, Տփլիս, 1826:
- 3 Լույս չի տեսել:
- 4 «Փալստոսի Բյուզանդացւոյ, Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832:
- 5 Գևորգ Տեր Հովհաննիսյան (1737—1812)—հայկաբան, նրա աշխատություններից շատերը մնացել են անտիպ: Նամակագիրը նկատի ունի՝ Բառարան պարսկերենի ի Գէորգեայ գպրէ Տեր Հովհաննիսեան Պալատցւոյ, Կ. Պոլիս, 1826:

- 6 Նկատի ունի Ղ. Ինճիճյանի «Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի», Վենետիկ, ս. Ղազար, 1835:
- 7 «Երկրագունդ», գրական և դիտական հանգես, Կ. Պոլիս, Հրատարակութիւն Ասիական Ընկերութեան, 1883—1886:
- 8 «Արեւելք», օրագիր ազգային, Կ. Պոլիս, 1884—1912, խմբագիր՝ Զարեհ Տամատյան, 1886—1888 թթ. Հրատարակութիւնները կան միայն նրուադեմում:
- 9 «Նոր դար», 1887, № 119 (թղթակցութիւնների բաժին):
- 10 Նկատի ունի Բ. Պաականյանի «Армянская география VII века по р. X. приписываемая Моисею Хоренского» աշխատութիւնը, СПб., 1877, 1893:
- 11 Այս աշխատանքը մնացել է անտիպ, պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (միկրո ժապավենի վրա):

9

- 1 Տես № 1 նամակի № 6 ծանոթագրութիւնը:
- 2 «Եւսեփի Պամփիլիայ Կեսարացոյ երկմասնեայ քրոնիկոն կանոն և ժամանակագրութիւն կանոն ի լատին բարբառն», աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ վարդապետի Մխիթարեան Ավգերեանց, մասն Ա, Բ, ի Վենետիկ, 1818:
- 3 «Պատմութիւն Մատթէոս ՈւռՀայեցոյ», Նրուադեմ, 1869:
- 4 «Մնացորդ բանից Անանիայի Շիրակացոյ», ի լոյս ած. Բ. Պատկանեան, ս. Պետերբուրգ, տպ. Կայսերական ճեմարանին գիտութեանց, 1877:
- 5 «Բացատրութիւն շարականաց, որ պարտին ի հասարակաց ժամանակագրութեան Հայաստանեայց եկեղեցոյ», աշխատասիրեալ Հ. Գարրիել Ավետիքեան ի Վենետիկ, 1814:
- 6 Նկատի ունի Ա. Բագրատունու «Տեղեկագիր պ. Բրոսեի գաղղիերեն թարգմանած Թումաս Արծրունց տառերորդ դարում գրած պատմութեան վերած հոդվածը, «Արարատ», էջմիածին, 1971, № 11, էջ 375—380:
- 7 Տես № 4 նամակի № 1 ծանոթագրութիւնը:
- 8 Պաղատար դպիր, Պարզարանութիւն քերականոյ, հ. 1—2, Կ. Պոլիս, 1771:
- 9 Duruy Victor (1811—1894)—Ֆրանսիացի պատմաբան, Փարիզի ակադեմիայի անդամ, բարձրագոյն աշխատութիւնների հեղինակ, որոնցից նշանավոր են Հռոմի (յոթ հատոր) և Հունաստանի (երեք հատոր) պատմութեանը նվիրված գրքերը:
- 10 «Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ի ս. Պետերբուրգ, 1885:
- 11 «Քննասեր», Բ պրակ:
- 12 Նկատի ունի Գ. Զարբանալյանի «Պատմութիւն հին դպրութեան» աշխատութիւնը, 2-րդ հատոր, Վենետիկ, 1878: Հիշված ձեռագիրն ունի հետևյալ վերնագիրը՝ «Երանելի Մովսէս թարգմանիչ որ է գրիչ սրբոյն Սահակայ:
- 13 Նկատի ունի՝ Ազաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Վենետիկ, ՌՄԶԴ:

10

- 1 Տես № 6 նամակի № 1 ծանոթագրութիւնը:
- 2 Քննադատութիւն Նուբարյան թարգմանութեան Վիկտոր Հյուգոյի «Նոտր-Դամին», Կ. Պոլիս, 1884:
- 3 Նորայր Բյուզանդացի, քննադատութիւն Հայրուսակի (Ղ. Ալիշան, Հայկական բուսարանութիւն, ի Վենետիկ, 1895), «Հանդէս ամսօրեայ», 1921, № 1—2, էջ 97—108, № 3—4, էջ 230—240, № 5—6, էջ 335—343, № 11—12, էջ 613—618, 1922, № 6—7, էջ 389—398, 1923, № 1—2, էջ 49—64, № 3—4, էջ 155—170, № 7—8, էջ 341—349, № 11—12, էջ 497—506, 1924, № 1—2, էջ 69—79, 1925, № 5—6, էջ 301—308, 1926, № 1—2, էջ 65—71:
- 4 Այս աշխատութիւնը մնացել է անտիպ:

11

- 1 Նկատի ունի Ս. Պարոնյանի «Բյուզանդիոնեան ժողով և Հայաստանեայց եկեղեցի» աշխատութիւնը, Փարիզ, 1908:

2 Նկատի ունի Հ. Գաթրճյանի «Պատմութիւն տիեզերական ի սկզբանէ աշխարհի Յմեո ժամանակ» աշխատութիւնը, Վիննա, 1840:

3 Տես «Թուղթ Մխիթար վարդապետի որ Գոշն կոչիր», «Արարատ», էջմիածին, 1901, № 2, էջ 225:

4 Տես № 6 նամակի ձև 1 ժանոթագրութիւնը:

5 Տես նորայր Բյուզանդացի, Հայերեն հին գրականութեան խնդիրները, Ա, Մովսէս Խո-րենացի, «Մշակ», Թիֆլիս, 1898, №№ 192—193, 203, 206, 216—217, 237, 1899, № 16, № 17:

6 Յաղրճյան Հ. Ստեփանը մատնանշված աղբյուրում աշխատանք շունի տպագրած: